



05/1464-17
1/13/1261-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 106- Ղ ի

ք. Երևան

<13> Օձ 2017 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Աղետների ռիսկի վերաբերյալ գեոտարածական տեղեկատվության կառավարման հետ կապված աշխատանքները համակարգելու և կանոնակարգելու նպատակով՝ ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) Ս. Պետրոսյան - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի գլխավոր խորհրդական (աշխատանքային խմբի ղեկավար)։

2) փ/ծ գնդապետ Հ. Խանգելոյան - ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի պետ։

3) փ/ծ գնդապետ Ա. Մուրադյան - ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության աղետների հետևանքների վերացման պլանավորման, կանխատեսումների և ծրագրավորման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ։

4) փ/ծ կապիտան Տ. Սիմոնյան - ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի մոնիտորինգի և կանխատեսման բաժնի ավագ հրահանգիչ.

5) Ն. Ստեփանյան - ՀՀ ԱԻՆ աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջազգային ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ.

6) Լ. Մարտիրոսյան - ՀՀ ԱԻՆ աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչության քաղաքականության ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ.

7) Ա. Նազինյան - Համաշխարհային բանկի «Հայաստանում աղետների ռիսկի կառավարման» ծրագրի համակարգող (համաձայնությամբ).


8) Ա. Չիլինգարյան - ՄԱԶԾ Աղետների ռիսկի նվազեցման ծրագրերի համակարգող (համաձայնությամբ):

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ապահովել աղետների ռիսկի վերաբերյալ գեոտարածական տեղեկատվության կառավարման հետ կապված աշխատանքների իրականացումը, այդ աշխատանքներում, ըստ անհրաժեշտության, ներգրավել ՀՀ ԱԻՆ համակարգի և այլ մասնագետներ:

3. Կատարված աշխատանքների մասին զեկուցել ինձ:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

5. Հրամանը հայտարարել ըստ առնչության:



ՇSign

Դ.Տոնյան